ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 141

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքը (Դաշտաքար բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Վեդի համայնքի (Դաշտաքար բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքը (Դաշտաքար բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արարատ-8 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի (Դաշտաքար բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
03-034-0171-0032 կադաստրային ծածկագրով 0.587 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր	03-034-0171-0032 կադաստրային ծածկագրով 0.587 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայրից արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Վեդի համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Դաշտաքար բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի (Դաշտաքար բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա.Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «30» «մայիսի» 2023 թ.